

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՊՈԼԻՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ»
ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՊԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒԴԻ
ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ



Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

2019 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

ԿԱՊԱՆ 2020

«Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպությունն իր բնականոն գործունեությունն է իրականացրել ՀՀ օրենսդրությանը և իր կանոնադրությանը համապատասխան՝ պահպանելով Կազմակերպության գործունեության օրինականության, կամավորության, համերաշխության, իրավահավասարության, կոլեգիալության, ժողովրդավարության, հրապարակայնության սկզբունքները:

Մասնավորապես.

1. Ներկայացրել է Կազմակերպության անդամների շահերը և պաշտպանել նրանց իրավունքներն աշխատանքային հարաբերություններում:
2. Ներկայացրել է առաջարկություններ՝ աշխատողների աշխատանքի պայմանների բարելավման վերաբերյալ:
3. Մասնաճյուղի հետ համագործակցել է Կազմակերպության անդամների պարգևատրման և խրախուսման հարցերում:
4. Միավորել է Կազմակերպության անդամների ջանքերը և համակարգել գործողությունները Կազմակերպության նպատակների իրականացման համար:
5. Սահմանված կարգով վարել է գործավարությունը և հաշվապահական հաշվառումը:
6. Նպատակաուղղել է Կազմակերպության միջոցները Կազմակերպության անդամների համար ծրագրերի իրականացմանը:
7. Հաշվետու ժամանակահատվածում արհկոմիտեն գումարել է **10 նիստ**, քննարկել **21 հարց** և ընդունել **25 որոշում**: Իր գործունեության մասին եռամսյա պարբերականությամբ իրազեկել է Կազմակերպության անդամներին՝ հրապարակելով այն ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի պաշտոնական կայքի «Արհեստակցական կազմակերպություն» բաժնում:
8. **2019 թվականի փետրվարի 22-ի համաժողովում** քննարկվել և հաստատվել է «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության **2018թ.-ի տարեկան գործունեության մասին հաշվետվությունը** և արհեստակցական կազմակերպության **2018թ.-ի կանոնադրական և ֆինանսական գործունեության ստուգումների վերաբերյալ Վերահսկիչ հանձնաժողովի հաշվետվությունը**:
9. Նույն **համաժողովում** (22.02.2019թ.) քննարկվել և հաստատվել են «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» հիմնադրամի Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության **2018թ.-ի տարեկան բյուջեի կարարողականը և 2019թ.-ի տարեկան բյուջեի նախահաշվը**, հաստատվել է **արհեստակցական կազմակերպության յուրաքանչյուր ծրագրին 2019 թվականին հատկացվող ֆինանսական միջոցների ծավալները**:

10. 22.02.2019թ.-ի համաժողովի որոշմամբ արհեստակցական կազմակերպության 2019թ.-ի ծրագրերի իրականացման համար հատկացվել է **695 000 ՀՀ դրամ (2018թ.-ին՝ 500 000 ՀՀ դրամ)**, որից ծախսվել է **510 270 ՀՀ դրամ (2018թ.-ին՝ 399 448 ՀՀ դրամ)**. **«Ուրախություն և տոն»** ծրագրով՝ **460 270 ՀՀ դրամ**, **«Սոցիալական օգնություն»** ծրագրով՝ **30 000 ՀՀ դրամ** և **«Ուշադրություն»** ծրագրով՝ **20 000 ՀՀ դրամ**: Մասնավորապես.
- 10.1. **«Ուրախություն և տոն»** ծրագրով, Մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ, արհեստակցական կազմակերպության 40 կին անդամներին նվիրվել են վարդեր, որի համար հատկացվել է 60 000 ՀՀ դրամ (40x3x500 դր.):
- 10.2. **«Ուրախություն և տոն»** ծրագրով, Նոր տարվա կապակցությամբ արհեստակցական կազմակերպության 59 անդամներին տրվել են դրամական նվեր՝ յուրաքանչյուրին 5 000 ՀՀ դրամի չափով, որի համար հատկացվել է 295 000 ՀՀ դրամ (59x5000 դր.):
- 10.3. Արհեստակցական կազմակերպության **«Ուրախություն և տոն»** ծրագրով /ծննդյան հոբելյանական տարեդարձ/ կազմակերպության 6 անդամի տրվել է դրամական նվերներ 80 000 ՀՀ դրամի չափով:
- 1) Կազմակերպության անդամ Նորա Լիպարիտի Մելքումյանին՝ ծննդյան 60 ամյակի կապակցությամբ տրվել է դրամական նվեր՝ 15 000 ՀՀ դրամի չափով:
- 2) Կազմակերպության անդամ Արուս Ռոբերտի Ավետիսյանին՝ ծննդյան 40 ամյակի կապակցությամբ տրվել է դրամական նվեր 10 000 ՀՀ դրամի չափով:
- 3) Կազմակերպության անդամ Լեռնիկ Նահապետի Պետրոսյանին՝ ծննդյան 60 ամյակի կապակցությամբ տրվել է դրամական նվեր 15 000 ՀՀ դրամի չափով:
- 4) Կազմակերպության անդամ Անուշ Հայկազի Խալափյանին՝ ծննդյան 60 ամյակի կապակցությամբ տրվել է դրամական նվեր 15 000 ՀՀ դրամի չափով:
- 5) Կազմակերպության անդամ Մանե Անդրանիկի Աղազուլյանին՝ ծննդյան 40 ամյակի կապակցությամբ տրվել է դրամական նվեր 10 000 ՀՀ դրամի չափով:
- 6) Կազմակերպության անդամ Վոլոդյա Վահանի Հովհաննիսյանին՝ ծննդյան 60 ամյակի կապակցությամբ տրվել է դրամական նվեր 15 000 ՀՀ դրամի չափով:
- 10.4. Արհեստակցական կազմակերպությունը, **«Ուրախություն և տոն»** ծրագրով, Նոր տարվա կապակցությամբ կազմակերպության անդամներին՝ մինչև 11 տարեկան 19 երեխաներին տվել է ամանորյա նվերներ՝ քաղցրավենիքի տոպրակի տեսքով, որի համար հատկացվել է 27 270 ՀՀ դրամ:
- 10.5. **«Ուշադրություն»** ծրագրով, Լյուդմիլա Սեդրակի Ղազարյանին՝ կազմակերպության ծրագրերի կանոնակարգի 3.5 կետով տրվել է դրամական նվեր 20 000 ՀՀ դրամի չափով:
- 10.6. Կազմակերպության **«Սոցիալական օգնություն»** ծրագրով /մոտ հարազատի մահ/ տրամադրվել է դրամական օգնություն 30 000 ՀՀ դրամ:

1) Արդա Շմավոնի Օհանյանին՝ կազմակերպության ծրագրերի կանոնակարգի 3.3 և 4.4 կետերով տրամադրվել է դրամական օգնություն 30 000 ՀՀ դրամ:

11. Արհեստակցական կազմակերպության 2019 թվականի եկամուտների նախահաշիվը և կատարողականը բերված են աղյուսակ 1-ում, իսկ ծախսերի նախահաշիվը և կատարողականը՝ աղյուսակ 2-ում:

1) Կազմակերպության դրամական միջոցների մնացորդը տարեսկզբին կազմել է 304 172 ՀՀ դրամ (բանկային հաշվեհամարում՝ 303 020 ՀՀ դրամ, դրամարկղում՝ 1 152 ՀՀ դրամ), ընթացիկ տարվա մուտքերը կազմել են **598 800** ՀՀ դրամ (ըստ նախահաշվի՝ 650 000 ՀՀ դրամ), իսկ ընդամենը եկամուտները՝ **902 972** ՀՀ դրամ (ըստ նախահաշվի՝ 954 172 ՀՀ դրամ):

2) Կազմակերպության ծրագրերով իրականացվել է 510 270 ՀՀ դրամի ծախս, այլ ծախսերը կազմել են 13 800 ՀՀ դրամ (բանկային ծախս), իսկ ընդամենը ծախսերը՝ 524 070 ՀՀ դրամ:

3) 2020 թվականի եկամուտների բյուջե տեղափոխված դրամական միջոցների մնացորդը կազմել է 378 902 ՀՀ դրամ:

**ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության
2019 թվականի եկամուտների նախահաշիվը և կատարողականը**

| | | Աղյուսակ 1 | |
|-----|--|--------------------|----------------|
| Հ/Հ | Եկամուտներ | ՀՀ դրամ | |
| 1. | Դրամական միջոցների մնացորդը տարեսկզբին | 304 172 | |
| 2. | Ընթացիկ տարվա մուտքեր, այդ թվում | նախահաշիվ | 650 000 |
| | | կատարողական | 598 800 |
| | | կատարող. % | 92,12 |
| 2.1 | Անդամավճար | նախահաշիվ | 649 000 |
| | | կատարողական | 597 800 |
| | | կատարող. % | 92,11 |
| 2.2 | Մուտքի վճար | նախահաշիվ | 1 000 |
| | | կատարողական | 1 000 |
| | | կատարող. % | 100 |
| | Ընդամենը | նախահաշիվ | 954 172 |
| | | կատարողական | 902 972 |
| | | կատարող. % | 94,63 |

Ընթացիկ տարվա մուտքերի թերհավաքագրումը պայմանավորված է ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի կողմից անդամավճարների փոխանցումը ուշացնելու հանգամանքով:

**ՀԱՊՀ Կապանի մասնաճյուղի արհեստակցական կազմակերպության
2019 թվականի ծախսերի նախահաշիվը և կատարողականը**

Աղյուսակ 2

| Հ/Հ | Ծախսերի անվանումը | ՀՀ դրամ | |
|-----|---------------------------------------|--------------------|----------------|
| 1. | Արհեստակցական կազմակերպության ծրագրեր | նախահաշիվ | 695 000 |
| | | կատարողական | 510 270 |
| | | կատարող. % | 73,42 |
| 2. | Խրախուսման ծախսեր | նախահաշիվ | 80 000 |
| | | կատարողական | 0 |
| | | կատարող. % | 0 |
| 3. | Գործուղման ծախսեր | նախահաշիվ | 40 000 |
| | | կատարողական | 0 |
| | | կատարող. % | 0 |
| 4. | Գրասենյակային ծախսեր | նախահաշիվ | 24 000 |
| | | կատարողական | 0 |
| | | կատարող. % | 0 |
| 5. | Տպագրական ծախսեր | նախահաշիվ | 5 000 |
| | | կատարողական | 0 |
| | | կատարող. % | 0 |
| 6. | Փոստային ծախսեր | նախահաշիվ | 3 000 |
| | | կատարողական | 0 |
| | | կատարող. % | 0 |
| 7. | Պետական տուրքեր | նախահաշիվ | 20 000 |
| | | կատարողական | 0 |
| | | կատարող. % | 0 |
| 8. | Այլ ծախսեր (բանկի գործառնական ծախսեր) | նախահաշիվ | 50 000 |
| | | կատարողական | 13 800 |
| | | կատարող. % | 27,6 |
| | Ընդամենը | նախահաշիվ | 917 000 |
| | | կատարողական | 524 070 |
| | | կատարող. % | 57,15 |

Արհեստակցական կազմակերպության նախագահ՝

Գ.Վ. Գալստյան